



ԱՆՅԱՏԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՉ

§ 2.1. ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՏԵԽՆԻԿԱ: ԱՇԽԱՏԱՏԵՂԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄ

Ամենայն հավանականությամբ դուք արդեն առնչվել եք համակարգիչների հետ: Սակայն հնարավոր է, որ դեռևս ծանոթ չեք այդ բարդ սարքավորման *աշխատանքի անվտանգության կանոններին*:

Քանի որ համակարգչային աշխատատեղում կյանքի համար վտանգավոր լարում կա, ապա ուշադիր եղեք ու *խստորեն հետևեք անվտանգության պահպանման ստորև բերված կանոններին*.

- ✓ համակարգչից օգտվելիս անհրաժեշտ է կրել մաքուր, չոր հագուստ,
- ✓ համակարգչային դասարան կարելի է մտնել միայն ուսուցչի թույլտվությամբ, հանգիստ, չդիպչելով համակարգիչների սեղաններին և սարքավորումներին,
- ✓ համակարգչով աշխատելիս անհրաժեշտ է խստորեն հետևել ուսուցչի ցուցումներին,
- ✓ վառվող լարերի յուրահատուկ հոտի կամ ծխի առկայության դեպքում պետք է ազատել աշխատանքային տեղը և անհապաղ տեղեկացնել ուսուցչին,
- ✓ առանց ուսուցչի թույլտվության չի կարելի համակարգիչը միացնել կամ անջատել,
- ✓ արգելվում է դիպչել համակարգչի լարերին,
- ✓ արգելվում է հպվել էկրանին և համակարգչի բաղկացուցիչ սարքերի հետնամասերին,
- ✓ արգելվում է համակարգչին մոտենալ կեղտոտ կամ թաց ձեռքերով,
- ✓ չի կարելի աշխատել այնպիսի համակարգիչներով, որոնք վնասված



պատյան, լարերի վնասված մեկուսացում կամ պատյանի վրա էլեկտրական լարման նշան ունեն,

- ✓ արգելվում է համակարգչի սարքերի վրա որևէ առարկա դնել,
- ✓ արգելվում է փորձել ինքնուրույն վերացնել համակարգչի անսարքությունը:

Անվտանգության կանոնների պահպանումը պարտադիր է բոլորի համար, և պատահական չէ, որ դրան առնչվող հիմնական կանոններին ծանոթանում եք մինչև գործնական պարապմունքները սկսելը: Սակայն անվտանգության կանոններից զատ, առողջության նկատառումներով, պակաս կարևոր չէ համակարգչով աշխատելիս հետևել նաև հետևյալ խորհուրդներին.

- ✓ պետք է աշխատել, որ իրանի հեռավորությունը էկրանից լինի պարզած թևի չափից ոչ պակաս,
- ✓ մեջքը հենել աթոռի թիկնակին, ողնաշարն ուղղաձիգ պահել,
- ✓ ոտնաթաթերը հատակին կամ հատուկ տակդիրին դնել,
- ✓ դաստակները թողնել ազատ, թույլ և ստեղնաշարին չհպել,
- ✓ ձեռքերն արմունկներում ծալել մոտ 90° -ի տակ,
- ✓ ուսի մկանները չլարել:



Նկ. 2.1. Համակարգչով աշխատողի ճիշտ կեցվածք